Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

7

Սանասարի գալուց հետո կյանքը բրուտանոցում զգալիորեն աշխուժացավ: Մենք երեքս իրար գիտեինք մեր հինգ մատների պես, մեր կյանքի նշանավոր և աննշան դեպքերը պատմել էինք մեկից ավելի անգամ տարբերակներով և կրկնատարբերակներով: Ժամերով աշխատում էինք առանց մի խոսք փոխանակելու, ամեն մեկը տարված իր մտքերով: Խոսելու նյութ չէր մնացել: Սանասարը բացվեց կամաց-կամաց, միշտ վերապահ, միշտ կասկածանքով: Մամոն ընդունեց նրան սվինների վրա, այդ բանը զգում էր նա և ավելի ազատ էր զգում իրեն, երբ Մամոն գնում էր ճաշ բերելու կամ երբ ընդհանրապես բացակայում էր բրուտանոցից: Մամոն նրան չէր կանչում նրա անունով, «ադամ» էր կանչում նրան, որը նշանակում էր՝ մարդ:

— Ադա՛մ, ցեխ տուր . . .

— Ադա՛մ, տախտակը փոխիր . . .

Իմ «բեռը» թեթևացրեց «ադամը», նա ոչ միայն կիսեց իմ աշխատանքի ծանրությունը, այլև Մամոյի անուղղակի կերպով սահմանված «սվոլիչ»-ների գրեթե հիսուն տոկոսը սկսեցին գնալ ընթացիկ հաշվին: Սանասարը ցույց էր տալիս, որ չի նկատում իր բաժինը, սակայն չէր կարելի չնկատել, որ երբեմն նրա աչքերը վառվում են չարության կրակով, վառվում արագ և արագ հանգչում: Մի անգամ նա չկարողացավ իրեն զսպել, երբ լսեց Մամոյի հերթական «սվոլիչը»:

— Ինչո՞ւ ես հայհոյում:

— Ես քեզ չեմ հայհոյում:

— Ո՞ւմ ես հայհոյում:

— Ինձ: Պրծա՞վ:

Սանասարը լռեց մի պահ:

— Քոսո՛տ, — եզրափակեց նա:

— Քոսոտը ի՞նչ է, — դարձավ նա Աշոտ դայուն աղրբեջաներեն:

— Քո «սվոլոչի» բաջանաղն է, — թարգմանեց Աշոտ դային, և կողմերը լռեցին:

Այն օրից, երբ Սանասարը առաջին անգամ ոտք դրեց բրուտանոց, երկու ոտները մերկացած մտավ ցեխի տաշտը և ոտներով տրորեց հում կավը մինչև պատշաճ հասունություն, այսինքն որից հետո կարելի էր ամաններ պատրաստել, անցավ ընդամենը երկու օր: Ճաշի դադարին ներս մտավ Լյալյան:

— Ճաշելու չեմ եկել, ճաշել եմ: Ո՞նց եք: Ուզո՞ւմ եք ասեմ, թե ով ոնց է: Ինչ վերաբերում է մաստերին . . . չէ, մաստերի մասին ոչինչ չեմ ասի . նաչալնիկների մասին, — նա շրթունքները սեղմեց և աջ ձեռքի ափով ծածկեց շրթունքները, — ոչ մի խոսք, ինչ վերաբերում է Մամոյին, — նա ձեռքը խփեց Մամոյի ուսին, — լսի՛ր, դու մի նայիր ինձ քո սև աչքերով, ավելի սևն եմ տեսել . դու շատ լավն ես, բայց ես աշխարհ չեմ եկել նրա համար, որ բոլոր լավերին սիրեմ . . . Ինչ վերաբերում է քեզ, — նա նայեց ինձ և ժպտաց, — մի՛ հուսահատվիր, ինձնից լավերին դեռ կտեսնես, ջահել ես . . . մի ձեռքդ տուր . . .

Նա վերցրեց իմ ձեռքը, շուռ տվեց ափն ի վեր, նայեց ուշադրությամբ և երկու ձեռքով խփեց իր երկու երեսներին:

— Եթե ես լինեի ճամբարի պետ, քեզ անմիջապես կազատեի ֆիզիկական աշխատանքից, օրական 800 գրամ սպիտակ հաց կտայի, 50 գրամ շաքար,

կկերակրեի կոտլետով և մաքուր յուղով տապակած կարտոֆիլով, կիսելով, կոմպոտով, հետո քեզ կկախեի, կամ . . . կհրամայեի, որ ամուսնանաս Լյալյայի հետ . . . իսկ հիմա անպետք ես և՛ կախվելու, և՛ ամուսնանալու համար մանավանդ . . .

Աշոտ դային ծիծաղեց հակառակ իր սովորության լսելի կերպով, մի տեսակ «խը՛-խը՛-խը՛ . . .»: Լյալյան ակնարկում էր իմ նիհարությունը:

— Ինչ վերաբերում է քեզ, բազե, — այդ Սանասարին էր վերաբերում, — ինչ վերաբերում է քեզ . . . — նա ցուցամատը դրեց շուրթերին և ուշադրությամբ նայեց նրան, — դուրս եկ, քեզ հետ խոսելիք ունեմ:

Սանասարը, որ մինչ այդ վառարանի մոտ նստած ցույց էր տալիս, որ չի լսում նրան, նետվեց Լյալյայի ետևից:

— Դուրսը ցուրտ է, — ասաց Աշոտ դային, — մտեք չորանոցը:

Չորանոցը բրուտանոցի երկրորդ բաժինն էր . այնտեղ պատրաստված ամանները բազմահարկ դարակների վրա շարված չորանում էին թրծվելու համար:

— Չորանո՞ց, — նա դուռը բացեց և նայեց ներս, — մինչև անգամ ելք ունի: Սքանչելի ճարտարապետություն . գրազ եմ գալիս, որ ճարտարապետը կալանավոր է: Ա՛յ — դա՛ չորանոց, բայց ես չորանալ չեմ ուզում, — տրտնջաց նա:

— Մինչև չչորանաք, չեք թրծվի, — ծիծաղեց Աշոտ դային:

Երկու րոպեից նրանք դուրս եկան: Մամոն, որ այնքան հուզված էր նրանց առանձնացումից (նա մինչև անգամ բարձրաձայն նեղսրտեց, — սվոլիչ, զա՛նգը, զա՛նգը . . .), Մամոն, որ մթնել էր Աբասթումանի ձմեռնամուտի նման, ժպտաց, երբ նրանք այդպես շուտ դուրս եկան, ժպտաց Աբասթումանի գարնան արևի բոլոր շողերով, իր սեփական բեղերի բոլոր թելերով:

— Իսկ դուք կարծեցիկ, որ ես, որ մենք . . . շա՜տ բան կարծեցիք, Մումո՛ւ, ասա՛, Մումու, ի՞նչ կարծեցիր:

Նա ցուցամատով սպառնաց Մամոյին, իսկ Մամոն . . .

Ոչ միայն ես, այլև ոչ ոք չհավատաց իր աչքերին . սկզբում ինձ թվաց, որ նա ծիծաղում է, բայց երբ նա բամբակակար հնամաշ բաճկոնի գրպանից դուրս քաշեց իր թաշկինակը և տարավ աչքերին . . . Մամոն լալիս էր, Մամոն . . .

— Մամո՞, — լսվեց Աշոտ դայու զգաստացնող ձայնը . գուցե միայն ես զգացի, որ Աշոտ դայու ձայնը չուներ այն ուժը, որ պետք է ունենար նման անսպասելի դեպքում:

— Մումո՛ւ, — բացականչեց աղջիկը և մոտեցավ իր կապույտ, երևի մետաքսե թաշկինակով, — քեզ ի՞նչ պատահեց . չեմ դիմանում ոչ մի արցունքի, մանավանդ, երբ դրանք թափվում են բեղերի վրա . . . Խեղճ մենք, խեղճ իմ բեղավոր հարազատներ, սիրելինե՛ր, ջղայի՛ն այծեր . . .

Նա թաշկինակով սրբեց Մամոյի արցունքները: Մամոն ենթարկվեց նրան անպաշտպան մանկան սրտառուչ հնազանդությամբ: Հետո աղջիկը մտահոգ ու լուրջ՝ թաշկինակը դրեց նստարանին և սկսեց կարգի բերել իր մազերը: Այդ միջոցին հնչեց ընդմիջման ավարտի զանգը:

— Ես գնացի, ցնոր, ուրախ տեսություն:

Նրա գնալուց հետո ես վերահասու եղա, որ մենք երեքս էլ նայում ենք նրա մոռացած կապույտ թաշկինակին: Նկատեցի և այն, որ նայում ենք այնպես, որ մյուսը չնկատի այդ: Եվս մի ակնարկ և ես չտեսա թաշկինակը: Զարմանալի ճարպկությամբ մեզնից մեկը անհետացրեց թաշկինակը:

— Գործերը գնո՛ւմ են, — բարձրաձայնեց Աշոտ դային, նստելով իր տեղը, — գրասենյակը արձանագրում է . . .

Պտտվեց անիվը և հերթական ամանը պատրաստ էր:

Տանը մեզ սպասում էր մեծ ուրախություն: Աշոտ դային ծանրոց ստացավ . երկու զմռսած շշերով հալած յուղ, շաքար, երշիկ, տաք գուլպաներ, հինգ տուփ «Սասունցի Դավիթ» ծխախոտ, երկու կտոր վարդագույն, անուշահոտ օճառ, լուցկի . . Ընթրիքից հետո մենք քաղցր թեյ խմեցինք և բարձր տրամադրությամբ պառկեցինք հանգստանալու: Աշոտ դային լուռ էր, մտքերով տարված, հետո սկսեց մեղմ ձայնով «Մայր Արաքսի» երգել:

Տանը մեզ սպասում էր ուրիշ մեծ ուրախություն ևս, — նոր տարվա իրիկուն էր այդ իրիկունը, որը չնայած ոչ մի բանով չէր տարբերվում ուրիշ իրիկուններից, բայց նոր տարվա իրիկուն էր:

— Շնորհավոր նոր տարին, — ասում եմ ես Աշոտ դայուն:

— Շնորհավոր նոր տարին, — պատասխանում է նա և արկղի վրայով պարզում է իր ձեռքը:

— Այս առիթով և՛ս մի-մի բաժակ քաղցր թեյ:

— Չէր խանգարի, — ասում եմ ես:

Ավելի շատ են այսօր անհատական ճրագները . ավելի շատ է աղմուկը, ավելի շատ են ետ ու առաջ լուռ երթևեկողների թիվը ու մախորկայի կծու ծուխը ավելի թանձր է: Նուրանբաևը չի խնայում փայտը, մեծ վառարանը ճարճատում է, երգում է վառարանը, խոսում է վառարանը բոլոր լեզուներով և ամեն մեկին թվում է, որ նա խոսում է իր մայրենի լեզվով:

Հանգստի գոնգը վաղուց էր հնչել, իսկ բարաքը չի քնում: Նոր տարին ժամանում է աշխարհի բոլոր օրացույցներով և ժամացույցներով, ժամանում է և այնտեղ, ուր չկա ո՛չ օրացույց, ո՛չ ժամացույց: Բարաքը չի քնում, իսկ բարաքի ավագը՝ Կոլոկոլնիկովը, ցույց է տալիս, որ ոչինչ չի նկատում: Նա քաջ գիտե, որ իր ուժերից դուրս է այդ օրը իր բարաքի բնակիչների աչքերը փակել և խռմփացնել, իսկ մյուս կողմից Կոլոլոլնիկովի քունն էլ չի տանում . . .

— Պյոտր Իվանիչ Լյապին, գործի՛, — հնչեց մի ձայն բարաքի խորքից:

— Պյոտր Լյապին, գծի վրա . . .

— Պե՛տյա, Լյա՛պին, Շալյա՛պին — գոռացին ամեն կողմից:

— Ժամանակն է . . .

Վերի, ձախակողմյան անկյունի տախտամածի առաջին հարկից դուրս եկավ բարձրահասակ, կիսով չափ սպիտակած, բայց առույգ դեմքով Պյոտր Լյապինը և կանգնեց բարաքի մեջտեղը .

— Նստել տեղում, — հրամայեց նա իր հաճելի բասով:

Համար յոթ բարաքի բնակիչները նստեցին իրենց տեղերում: Տիրեց լռություն: Լսվում էր միայն վառարանի երգը:

Լյապինը կամ, ինչպես նրան անվանում էին, յոթերորդ բարաքի Շալյապինը, ձեռքը բարձրացրեց, իջեցրեց և ողջ բարաքը երգեց նրա հետ .

Վայրի ստեպներով Բայկալի . . .
Ուր պեղում են հանքերում ոսկի . . .

Երգում են ամբողջ ձայնով, զարմանալի ներդաշնակ . այլազգիները, որոնք չգիտեն խոսքերը, երգում են առանց խոսքերի .

Ու հո՛ւ, հո՛ւ-ո՛ւ, հո՛ւ, հո՛ւ-հո՛ւ, հո՛ւ . . .
Թափառաշրջիկը նզովեց իր բախտը,
Ու քայլեց պայուսակն ուսին . . .

Թախիծ կա նրանց աչքերում, բայց դեմքերը ոգեշնչված են ու վառվում են ինչ-որ ներքին կրակով: Նրանք երգում են ու չեն լսում իրենց երգը, ուրիշ երգեր են լսում նրանք, երգեր նոր օրերի, ազատ կյանքի, մտքերի աչքերով տեսնում են նրանք

իրենց տունը, հարազատներին, նրանցից շատերը մինչև անգամ ծիծաղելի մի դեպք են հիշում նոր տարվա հետ կապված, հիշում են ու ժպտում ու երգում:

Իսկ եղբայրդ հեռու Սիբիրում . . .
Նստած է ոտներին շղթա . . .

երգում է ողջ բարաքը, որոտում է, տնքում ու երգում .

Ա՛խ, հայրդ մահացել է վաղուց, Ննջում է հողի տակ խոնավ . . .

. . . Հանգավ վերջին ճրագը, ու բարաքը հանգստացավ կարկուտից հետո ծեծված սրտի նման: Քնել է Մամոն երանական ժպիտը դեմքին, երևի նա երազում տեսնում է Լյալյային, կապույտ թաշկինակով, աշխատանքից հետո նա սրբում է Մամոյի քրտինքը, նա՛, Լյալյան . . .

Ահա մետենում է Սերգեյն իր հորը, Վլադիմիր Մավրինին, գրկում է նրան ամուր և ուրախ-ուրախ ասում է ականջին:

— Տեսնո՞ւմ ես, դու ինձնից բախտավոր ես, դու դեռ ապրում ես, իսկ ես չկամ . ուզո՞ւմ ես փոխենք տեղերս: — Իսկ Իվան Սորոկինը քնած տեղը ծիծաղում է . ինչպե՞ս չծիծաղես . կոմունալ բաժնի վարիչ Բուրդենկոն, նա որն ամուսնացել է իր կնոջ հետ, նստած դիմում է գրում օրգաններին . — խնդրում եմ ինձ ուղարկեք այնտեղ, որտեղ գտնվում է իմ այժմյան կնոջ օրինական ամուսինը, թող գա, տիրություն անի իր կնոջը, իսկ ես գնամ նրա տեղը մի քիչ հանգստանա՞մ . . . Իմամ Ալի Բագիրբեկովը բարաքի ավագն է . նա պետի հետ խոսում է, խոսում զարմանալի սահուն ռուսերենով: